Այս թափառումների շարժառիթը յաճախ միայն կրօնական չէ. նրանք գնում են աշխարհ տեսնելու, իրանց հայրենիքի հետ մօտիկից ծանօթանալու եւ իրանց սրբազան տաճարները նայելու նպատակով, քանի որ տաճարները միեւնոյն ժամանակ գեղարուեստի ու հազուագիւտ իրերի թանգարաններ են ներկայացնում:

Նրանք նոյնպէս շատ են սիրում ուխտ գնալ բարձր սարերը, մանաւանդ իրանց սիրած սրբազան Ֆուջի, ուր բարձրացողների թիւը 10-15 հազարի է հասնում ամեն տարի: Այդ Ֆուջին մի մասնաւոր սէր ու յարգանք է վայելում եւ զարմանալի նման է մեր Փոքր Մասիսին:

Հասաւ ժողովրդական Մատսուրի կոչւած տօնի օրը:

Թմբուկի անընդհատ զարկը վաղ առաւօտից ոչ ոքի հանգիստ չէր տալիս:

Ես իջայ քաղաք իմ հաւատարիմ ջին Զիւդաի հետ: Բոլոր տների պատերը բաց էին, եւ այնտեղ, ինչպէս օթեակներում, բազմած էին գեղեցիկ ճապոնուհիները: Յանկարծ դէպի ինձ վազեց եւրոպական տարազով զուգւած մի ճապոնացի երիտասարդ եւ առաջարկեց ինձ անգլիերէն, որ երթանք իր մի ծանօթի տունը, որի առջեւից անցնելու էր թափորը:

Նախ ուզում էի հրաժարւել, այնքան անսպասելի էր այդ առաջարկը, բայց իմ Զիւդաի յանդիմանող հայեացքը զգացրեց ինձ, որ ես իզուր էի անվստահութեամբ վերաբերւում այդպիսի սիրալիր ու պարզ հիւրասիրութեանը: Ես յօժարւեցի, ու մենք միասին առաջ շարժւեցինք խիտ բազմութիւնը ճեղքելով, մինչեւ որ երիտասարդը կանգ առաւ մի փոքրիկ տնակի առաջ: